ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՒՈՍԵԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

ՊՍԱՐԳԻՍ ՓԱՆՈՍԵԱՆ

80ականների սկզբին, հարցազրոյցներից մէկում, Հրանտ Մաթեւոսեանը նկատում էր. «... մարդկութեան պատմութեան մէջ պահեր, իրադրութիւններ կան, որոնց չպէտք է առընչուի գեղարուեստական գրականութիւնը։ Օրինակ, 1915 թուականի արիւնոտ եղեռնը։ Նոյնիսկ հանճարեղ Չարենցը, դիմելով այդ թեմային ձախողուեց։ Ուրեմն ի՞նչ ակնկալել միւս գրողներից։ Վերցնենք թէկուզեւ Կոստան Զարեանի Նաւը լերան վրայ [երկը – Ս.Փ.]։ Ես գիտեմ, որ նրա [հեղինակի – Ս.Փ.] համար ցաւալի է։ Անտանելիօրէն ցաւալի։ Բայց այդ ցաւը կարծես թէ մարում է, չէզոքանում՝ գեղարուեստական խօսքին առընչուելով»[2]։

Անտարբերութիւն ու լռութիւն չի ենթադրում գրողի նման դիրքորոշումը։ Պարզապէս նա գտնում է, որ գեղարուեստական խօսքի մէջ ինչ որ բան անխուսափելիօրէն կորչում է ազգային ողբերգութեան ու ցաւի անմիջական ապրումից. այդ ցաւն արտայայտւում է որոշակիօրէն «միջնորդաւորուած» (տուեալ դէպքում՝ գեղարուեստօրէն), հետեւաբար եւ՝ անուղղակիօրէն, ակամայ կեղծուած։

Գրողի շեշտուած անհատականութիւնը յստակ երեւում է նաեւ պատմութեան գեղարուեստական իմաստաւորման փորձերը մեկնաբանելիս–գնահատելիս։ Մարդու անհատական կենսափորձից, յիշողութիւնից դուրս գտնուող «մեծ, հեռաւոր պատմութիւնը» Մաթեւոսեանի համոզմամբ «խաւար» է, որը լուսաւորել անհնարին է։ «Ձնայած մեզանից իւրաքանչիւրին չգիտեմ ինչու թւում է, թէ այդ մենք ենք՝ որ իմաստ ենք տալիս անցեալին։ Մինչդեռ անցեալն իմաստաւորուած է այդ անցեալի մակարդակում...»[3]։

Այս կերպ մասամբ նաեւ հիմնաւորելով ստեղծագործական իր ձեռնպահութիւնը պատմական ժանրում՝ Մաթեւոսեանն, այդուհանդերձ, բնաւ մտադրութիւն չունի անջրպետուել ազգային պատմութեան մեկնութեան փորձերից։ Աւելին, անմասն չէ նաեւ իմաստաւորման–գնահատման օրինաչափ մղումից։ Մի՞թէ գնահատանք չէ արդէն իսկ այն, որ գրողը նկատում է, թէ «Իրական «Կերնիքան» մոլեգնել է ահա այս

երկրում եւ միայն այստեղ, բայց «Կերնիքա» կտաւն այստեղ չի մոնտաժուել»[4]։ Բոլորովին ուրիշ հարց է, որ գրողը հիմնականում ձեռնպահ է պատմութեան գեղարուեստական իմաստաւորման փորձերից· պատմա–գեղարուեստական ժանրերը դուրս են նրա ստեղծագործական հետաքրքրութիւնների շրջանակից։ Այս տեսակէտից որպէս մասնակի բացառութիւն պէտք է ընդունել «Զէզոք գօտի» թատերգութիւնը։ Մասնակի, որովհետեւ ստեղծագործութեան ընդգրկած ժամանակահատուածն առաւել մերձ է գրողի նշած «պապերի, նախապապերի ժամանակին», քան «մեծ, հեռաւոր պատմութեանը»։ Ու թերեւս այդ հանգամանքն է, որ նրան, այնուամենայնիւ, թոյլ է տալիս մերձենալ դարասկզբի համազգային մեծ ողբերգութեանը։ Նախապէս ասենք, որ նոյնիսկ այդ դէպքում Մաթեւոսեանը չի անտեսում իր իսկ առաջարկած վերապահութիւնը· այսինքն՝ գործ ունենք ոչ թէ գեղագիտական մերձեցումի, այլ առաւելաբար խոհական–փիլիսոփայական վերլուծումների ու մեկնութեան փորձերի հետ։ Այդ իմաստով նշուած թատերգութիւնը չի մեկուսանում Մաթեւոսեանի միւս ստեղծագործութիւններից· բանավիճային ներքին լիցքերով յղի են «Խումհար»[5], «Կենդանին եւ մեռեալը»[6] վիպակը, «Մեծամօր»[7] էսսէն։

* * *

Իւրաքանչիւր պատմութեան փիլիսոփայութիւն ենթադրում է հայեացքների որոշակի համակարգ՝ ձեւուած պատմական օրինաչափութիւնների ճանաչման, պատճառահետեւանքային կապերի իմաստաւորման հիմքի վրայ։ Հայոց ազգային պատմութեան մաթեւոսեանական փիլիսոփայութիւնը տակաւին արարման ու ամրողջացման ընթացքում է, եւ դժուար է ուսմունքի յաւակնող յստակուած համակարգ առանձնացնելը։ Միւս կողմից, սակայն, չի կարելի անտեսել մեր բարդ ու հակասական պատմական ընթացքը վերլուծելու, պատճառահետեւանքային կապերը բացայայտելու եւ գնահատելու խիստ որոշակի միտումը, որն արդիւնքում պատմական իրողութիւնների ըմբռնման ու արժեքաւորման ուրոյն չափանիշեր է վաւերացնում։

«Զէզոք գօտի»ում մի դրուագ կայ, երբ գլխաւոր հերոսը՝ Արել Արծաթբանեանը, իր արմատ–ակունքներից օտարուած, ազգային արժէքներին ակնյայտ քամահրանքով վերաբերող երիտասարդ ճարտարապետ Բահաթրեանին ասում է· «Դու ի հարկէ ճիշդ ես։ Ճիշդը ի հարկէ դու ես։ Բայց ես զարմանում եմ, թէ դու էդ ինչպէ՞ս ես կարողանում ճիշդ լինել։ Ճահիճը։ Այո, ճահիճը։ Միայն ճահիճը։ … Ի հարկէ ճահիճ։ Բայց դու ինչպէ՞ս ես կարողանում ճահճին ճահիճ ասել։ Դու ինձ բացատրիր, որպէսզի ես էլ կարողանամ, քեզ նման, հեռու մնալ, արթուն, սթափ,

ճիշդ լինել, գեղեցիկ ու խելացի մնալ — չխելագարուել»[8]։

Ուշադրութիւն դարձնենք այն հանգամանքին, որ ստեղծագործութեան ընդգրկած ժամանակաշրջանը 20րդ դարասկիզբն է՝ 1914 թուականը, իսկ «ճահիճ» են ընորոշուում ազգային իրականութիւնն ու կեցութիւնն ընդհանրապէս։ Անիի շինարարական արուեստը հետազօտող Արծաթբանեանի ներքին լարուած, բայց զուսպ ընդդիմութիւնը խորապէս հարազատ է Մաթեւոսեանին։ Հոգեւոր բացառիկ լարումով, թեր ու դէմերի անդուլ մաքառումով է գրողը անդրադառնում պատմական այս կամ այն իրողութեանը։ Մայրայեղօրէն հակասական է ու դաժան առեղծուածներով նշանաւորուած հայոց տարեգրութիւնը։ Բնականաբար, հոգեբանօրէն հակասութիւններից զերծ չէ նաեւ ինքը՝ գրողը, երբ հետամուտ է առեղծուածակերպ, բայց ըստ էութեան վաւերացուած պատմական անողոք ճշմարտութիւնների քննութեանը։

«Ի՞նչ էր հարկաւոր՝ որպէսզի չլինէր այնպէս, ինչպէս եղաւ»[9], ահա՛ առանցքայինը, հարցերի հարցը, որ ամէնից շատ է մտահոգում գրողին։ Ըստ որում, ոչ միայն իրեն։ Վաղամեռիկ Մուշեղ Գալշոյեանը ծանրումեծ նոյն Հարցին անդրադարձել է Մարութա սարի ամպերը[10] պատմուածաշարի մի քանի երկերում եւ յատկապէս «Մեղապարտը» պատմուածքում. «Չէ՞ որ եղածը մի մարդու գլխին, մի գերդաստանի գլխին եկած փորձանք չէր, այլ ժողովրդի ողբերգութիւն։ Այդ ողբերգութեան պատճառները, գլխաւոր պատճառը։ Եւ ամէն մէկը մատը թող դնի իր երակին եւ հարց տայ՝ ինչո՞ւ այդպէս եղաւ, մատը դնի իր երակի վրայ եւ պատասխան պահանջի՝ այնքան եւ այնքան եւ այնպէս պահանջկոտ եւ այնպէս անհաշտ, որ տեսլահար արիւնը չփոթուի երակներում։ Ամէն մէկը մատը նշտարի պէս իր երակին թող դնի եւ բոլորը միասին՝ ցեղի երակին»[11]։

Մի վերապահութիւն անխուսափելի է. Գալշոյեանը հարցն առաջադրում է ճակատագրական, բայց մասնակի իրողութեան՝ Մեծ Եղեռնի առընչութեամբ։ Մինչդեռ Մաթեւոսեանը իր հարցադրմանը ելնում է մեր պատմական ճանապարհի ամբողջական ըմբռնումից։ Սակայն անգամ յետին թուով, ժամանակային զգալի հեռաւորութեան վրայ անհնարին է սպառիչ ու ստոյգ, կամ՝ թէկուզեւ բաւարար պատասխան գտնել։

Զօրեղ ու անհերքելի պատմական շատ ճշմարտութիւններ են վկայակոչւում ու համադրւում «Մեծամօր» էսսէում, բայց աւելի յաճախ դրանք իրարամերժ ու փոխբացառող են։ «Թուխ ու ջղային մարդկանց մի ցեղ, որ իրեն հայ ու իր երկիրը Հայք էր կոչում, հիթիթներին ոտնատակ տալով հիւսիսից իջաւ Ասորիք, սուրաց ու փշրեց երկաթով բրոնզէ բանակներն ու ...»։ Ու ... «Ազնիւ Դիլբասին փնտռում է 1915ին անհետ կորած իր Համազասպ հօրը, Արուսեակ մօրը, երկու միլիոն եղբայրներին ու ...»[12]։ Ժամանակի ամենակուլ յորձա՞նքը, պատմութեան դաժան փոր-

ձուլթիւններ՞ը, թէ՞ ճակատագրի հեգնանքը։ «Մի՛ հեգնիր,— ասես կանխում է հեղինակային հատու ձայնը։ Միաժամանակ սաստում.— Մի՛ նվնվա»։ Ներքին այս երկուութիւնը շարունակական, մնայուն հոգեվիճակ է՝ աշխարհայեացքային ուրոյն դրսեւորումներով։ Գրեթէ նոյնպիսի երկուութիւնից է ներքուստ գալարուում—տառապում ձիապան Մեսրոպը համանուն վիպակից, որը «Հայոց պատմութեան սկիզբը մէկ քչում, տանում, չորսհազար տարուայ խորք էր իջեցնում, մերթ ծլեցնում էր երէկուայ միջից», մերթ պանծացնում, ասենք, Գայլ Վահանին՝ «Եկան՝ ջարդեց, եկան՝ ջարդեց, նորից եկան...», մերթ հիասթափուած հեգնում. «Գայլ Վահան, չէ՛ մի, քաջ Նազար»[13]։

Հերքում—հաստատումների անդուլ յորձանուտում «Խումհար» վիպակի գլխաւոր հերոսն, այնուամենայնիւ, հակուած է որոշ մեծ հարցականների ճշդումը կատարելու։ Եւ յետին թուով պատասխանանման ինչ—որ բան կարծես թէ գտնուում է «Գերմանական Ֆաշիզմը... հայերից մի երեքհարիւր հազար գինուորի կեանք է խլել...»[14]։ Ընդամէնը մէկուկէս միլիոն բնակչութիւն ունեցող Խորհրդային Հայաստանից՝ երեք հարիւր հազար գինուոր։ Այս ընկալմամբ, անշուշտ, կարելի է խորհել, որ եթէ այդպիսի զօրք դարասկզբին՝ Քեմալի դէմ ունենայինք, կը յաղթէինք։ Նման պնդումը, սակայն ընդամէնը պարզ ու չոր տրամաբանութեամբ է։ Մինչդեռ պատմական վաւերացուած ճշմարտութիւններ կան, որ ոչ մի տրամաբանութեան չեն տրուում։ Եւ մնում է ցաւով արձանագրել, որ «գրողի տարած այդ ճակատագրի դէմ երեք հարիւր հազար չէ — միլիոնանոց բանակներ շարժիր ու թէկուզ յաղթիր՝ վերջում պարգուում է, որ միեւնոյն է՝ յաղթել ես յօգուտ թշնամու»[15]։

Ուրեմն իսկապէ՞ս ճակատագրական հեգնանքը։ Իսկ ո՞ւր թողնել անցանկալի ու ահազանգող այն ճշմարտութիւնը, որ պահանջուած ժամին երեքհարիւր հազարանոց բանակն այնուամենայնիւ չունեցանք։ Պատասխանի որոնումները Մաթեւոսեանին տանում են պատմութեան խորքերը, կողմնորոշում դէպի մեր ազգային կեցութեան հիմքերի քննութիւնը։ Ծանր ու ճնշող են համադրում—հակադրումներից ծնուող հետեւութիւնները։ Պարտուողականութիւն չի քարոզում գրողը, բայց ցաւով խոստովանում է, որ «բոլոր ճակատամարտերն այլեւս տանուլ են տրուած», որ իր երկրից «յաղթանակ տարած ոչ մի զօրավար չի մեծարուել յաղթական կամարով», որ ըմբոստացած ու կռուող փոքրաթիւ խմբերը ոչնչացուել են «լեռներում ու կիրճերում», ձախողուել են ելք գտնելու, միասնական դիմադրութիւն կազմակերպելու բոլոր փորձերը, այսինքն ընդամէնը «ջախջախուած բանակի միաւոր» է իր ժողովուրդը։ Այսքանից յետոյ, անշուշտ, անհասկանալի պիտի թուայ, թէ «այս երկրում երբեւէ տէգ են կոփել ու տէգ են բռնել»։ Նման մտասեւեռումով եւ ընկալ-

մամբ, բնականաբար, գրեթէ չի մխիթարում կամ անդորրում նոյնիսկ այն գիտակցումը, թէ «այս ժողովուրդն իր ծանր մշակոյթն այնպէս է քաշում, ինչպէս կուռում է մրջիւնը լիքը հասկի դէմ, ինչպէս ճարճատում է սայլը խաչքարի տակ»։ Աւելին, իրարամերժ, բայց վաւերական ճշմարտութիւնների բաղդատման մէջ, դժուար չէ զգալ ուշացած վերագնահատումի եւ անիրականալի վերընտրութեան բուռն մղումը։ Եթէ երկընտրանքն անխուսափելի էր, ճակատագրով պարտադրուած, ապա «բանաստեղծների տոհմի» մագաղաթապաշտութիւնից առաւել նախընտրելի չէ՞ր մեծամօրեան երկաթի փառաբանումը «թուխ ու ջղային» նախնիների աւանդոյթով։

Յուզական–զգացմունքային մակարդակում արտածուող այս ու նման հարցերը, սակայն, ոչ թէ ստոյգ ու սպառիչ պատասխան են ենթադրում, այլ մատնում են համազգային ողբերգութեան վերապրումից սերող տագնապն ու խռովքը։ Այս պարագային զգալիօրէն խլանում, բայց չի լռում բանականութեան ձայնը։ Ընդհակառակը, բանականութիւնը հետամուտ է առաւել խորքային պեղումների, հակուած է դէպի պատմական իրողութիւնների թաքուն իմաստների պարզաբանումը պատճառների ճշդումն ու գնահատումը։ Ահա օրինաչափօրէն ենթադրուող ու իմաստաւորում պահանջող, բայց գրեթէ անտեսուած մի հարց. «Այս ժողովրդի եղեռնը ինչու էր լինելու 1915ին՝ երէկ. մորթելու, վառելու, մոխիրը ծովերին տալու, տեղը բանջարանոց անելու ժամանա՞կ չգտանք 1315ին, 815ին, 15ին։ Զեռքս, ախար, մեկնում եմ՝ հասնում է այդ երկու միլիոն ուխտաւորին, որ Փրկութեան լեռն էին ելնում։ Աշխարհում ցանուած տիֆերի ու թաքնուած դարանների միջով անցնես, անցնես, հասնես ու յօշոտուես քո տան դրանը»[16]։ Ուշադրութիւն դարձնենք, որ հպանցիկ, ամենաընդհանուր բնորոշումներով — բայց իմաստաւորուում է ժողովրդի անցած պատմական ճանապարհը — իմաստաւորուում է նրա քաղաքական կեռմանների վկայակոչմամբ։ «Զէգոք գօտի» թատերգութեան հերոսներից մէկն է ազգային սրուած ինքնագիտակցումով նկատում, թէ մեր «նախնին պարսիկից, արաբից, թուրքից, քրդից, տիֆից իր արիւնը փրկել, բերել տուել է» յաջորդներին։ Այնուամենայնիւ, ինչո՞ւ 1915ին՝ «Փրկութեան լեռը» ելնելիս, սեփական «տան դրանը»։ Տուեալ դէպքում՝ «Մեծամօր» էսսէում, պատասխանն ըստ էութեան առկախ կամ անյատակ է մնում։ Աւելի ուշ՝ 90ականներին, մի հարցազրոյցում, Մաթեւոսեանը ի վերջոյ բանաձեւում է ակնկալուած պատասխանը. «Թուրքի կռիւը քո պետականութեան հնարաւորութեան դէմ էր, եղեռնը քո պետականութիւնը բացառելու էր կոչուած»[17]։ Նման ընկալմամբ այլեւս կասկած չի մնում, որ արձակագրի նշած «Փրկութեան լեռը» հենց պետականութեան հաստատման մօտալուտ հնարաւորութիւնն էր, քանզի ընդամէնը երեք տարի էր բաժանում

1918ի Հանրապետութեան հռչակումից։ Այսինքն՝ պատմութեան դարանակալ ու արիւնոտ քառուղիներով անցած ժողովուրդն իսկապէս արդէն իր «տան դրանն» էր։

Այստեղից դժուար չէ արտածել ազգային պատմութեան մաքեւոսեանական ըմբռնման ու գնահատման ելակէտը. որը. որոշ իմաստով. պատասխան է նաեւ առաջադիր հիմնահարցին։ «Որպէսզի չլինէր այնպէս, ինչպէս եղաւ» հարկաւոր էր ... Հիմնաւորման համար գրողը գնում է դարերի խորքը, եւ պարսից արքային ընծայելիք—մերժելիք «պուտուպուրիկ ձիու» յիշատակումը իբր որպէս ճակատագրական կռուախնձոր, ընդամէնը դառը, ցաւագին ինքնահեգնանք էր՝ պարտադրուած «պարտուած բանակի» մարտիկին։ «Հովիւները գայլերի դէմ կրակ են վառում եւ տալիս հովուացու իրենց որդիներին»։ Իսկ «Հայոց թագաւոր լինելու ծանր գործի համար» հարկաւոր էր, որ հայրը փորձ հաւաքէր, յղկէր ու որպէս ադամանդ պարզէր որդուն։ Հայոց Տիրան արքային դա չյաջողուեց։ Փոխարէնը հարկաւոր էր, որ գոնէ նրա որդին՝ Արշակը, «կատարողութիւն» ունենար «բազմանուն երկիրը դարձնել բռունցքի պէս Հայք», հարկաւոր էր, որ նոյն Արշակ թագաւորը «բաց մարտադաշտում նետատարափի տակ» չմնար «մերկ ու մէնակ», «բանաստեղծ մարդ» չլինէր «յոյների ու պարսիկների արանքում»։ Եւ ի վերջոյ հարկաւոր էր, որ հայ նախարարները «չզուէին» թագաւոր ունենալուց։ Վերջին պայմանի առաջադրմամբ Մաթեւոսեանը կարծես որոշակիօրէն համաձայնում է հայոց պատմութեան մեկնաբանութեան աւանդական տեսակէտին, որը քննութիւն չի բռնել։

Անտարակոյս, ժամանակի պատմական սրբագրումների ընկալմամբ եւ յետին թուով հետեւութիւնները չեն կարող ու չեն էլ յաւակնում Մեծ Հարցի պատասխանը լինել, որովհետեւ պատմականօրէն անվաւեր են։ Միաժամանակ, անհնար է պնդել, թէ նշուած պայմանների իրագործումն իր ժամանակին ճակատագրական փլուզումները կանխելու ստոյգ երաշխիք էր։ Այնպէս որ դրանք ըստ էութեան տեսական պայման—հետեւութիւններ են, որոնք, սակայն, յուշում են, թէ ազգային ներդաշնակ կեցութեան երաշխիքը Մաքեւոսեանը տեսնում է ազգային պետականութեան մէջ։

Պատմութիւնը հազարաձայն վկայում է, որ այդ երաշխիքը չի գտնուել։ Ուրեմն ո՞րն է եղել մեր ազգային յարատեւութեան գրաւականը, ո՞րն է ազգային ինքնութիւնը ընորոշող այն որակը, որով անթաքոյց հպարտանում է նոյնիսկ Մաթեւոսեանի՝ ներքուստ խռոված ու հակասական հերոսը՝ ձիապան Մեսրոպը. «... ուրեմն տղամարդ ենք եղել՝ որ թուրքը հազար տարի բկներիս նստած դիմացել ենք»[18]։ Պատասխանի հիմնաւորումներում գրողն օրինաչափօրէն դիմում է ազգային կեցու-

թեան հոգեւոր–բարոյական հիմքերի քննութեան ու արժեքաւորմանը։ Առանձին ջանադրութիւն չի պահանջւում՝ համոգուելու համար, որ պետական–քաղաքական կեանքում՝ անկումներն ու նահանջները մի տեսակ հակակշռուել են հոգեւոր–մշակութային ակնառու նուաճումներով։ Անգնահատելի է վերջիններիս դերը, եւ եթէ Մաթեւոսեանը երբեմն քամահրանքով կամ դառը հեգնանքով է արտայայտում («անմտութեան չափ ուրախ բանաստեղծների քո տոհմը, ծաղրածուների այդ մեծ ընտանիքը հիմա ամբողջ աշխարհով մէկ արեւ է փռում...»), ապա ոչ թէ դրանց նշանակութիւնը հերքելու միտումով, այլ սոսկ ազգային ցաւի խորը վերապրումից, ճակատագրական անարդարութեան դէմ ընդոստ բողոքով։ Իսկ մնայունն ու էականը ազգային սթափ ինքնագիտակցումով պայմանաւորուած դրուատող հպարտութիւնն է. «Եւ իմացած եղիր, որ ամենահզօրը քո աստուածութիւնն է, որովհետեւ խոստովանանքի բառը հնչում է միայն քո աստուածութեան տաճարներում»[19]։

Թւում է, թէ Մաթեւոսեանը միտում ունի թանձրացնելու պատմական կեցութեան հակասութիւնները՝ անընդհատ համադրելով մի կողմից աղիտաբեր կորուստները քաղաքական թատերաբեմում, միւս կողմից՝ հոգու, մտքի եւ բարոյականութեան չքեղ յաղթանակները։ Մինչդեռ, որքան էլ տարօրինակ, բայց դրանք առաւելապէս իրական ու ինքնակայ համադրումներ են, հայ ժողովրդի պատմական գոյութեան ու ճանապարհի իւրայատկութիւնները։ Առնուազն երկակի են դրանց գիտակցումի հոգեբանական անդրադարձումները։ Հպարտութիւնից աւելի յաճախ անփարատելի ցաւն է սողոսկում, համակում էութիւնը։ Անարդարացիօրէն պարտուածի ցաւն է այդ, հոգեւոր ցաւն անողոք այն ճշմարտութեան գիտակցումի, որ «Քո երկիր մտել են ոչ թէ փաղանգների կուռ սպառնալիքով կորզելու հաւասարի քո դաշինքը կամ գնելու քո մեծահոգի չէզոքութիւնը, այլ թափթփուած խուժանի խմբերով են եկել՝ կնիկ, ճարմանդ, կարպետ, ձի խլելու, արտ հրդեհելու»[20]։ «Զէզոք գօտի»ի գլխաւոր հերոսի՝ ճարտարապետի բառերով այսպէս է պոռթկում այդ ցաւը. «Երգից էլ, հացից էլ, այդ ամբողջ օրուայ գեղեցկութիւնից աւելի մի բան կայ, որ մարդու խեղդում է՝ թշնամուդ գերազանցութիւնը, թշնամուդ սպանիչ գերազանցութիւնը հասկանալը։ Էդ արդէն պարանը վիզդ անցրու, քանի որ, միեւնոյն է, թախիծն ու խելագարութիւնն են քեզ խեղդելու»[21]։

Ու որովհետեւ մտաւոր կամ հոգեւոր–բարոյական գերազանցութեան մասին չէ խօսքը, այլ պատմութեան մէջ սոսկ աւեր ու արիւն սփռած բարբարոսութեան, ապա ցաւն աւելի է սաստկանում։ Այդ բարբարոսի գովեստն անգամ ցաւ է պատճառում. եւ հոգեկան նման վիճակում, ցաւի մէջ մերժելի են թւում նոյնիսկ մեր բանականութեան ու բա-

բոյականութեան յաւերժող յաղթանակները, նոյնիսկ մեր գիրը, որ «ոչ ոքի ոչինչ չի հրամայում... ինքն իր համար կայ ներամփոփ, խոհուն եւ իր խորին եզրահանգումն ինքն իր մէջ մեռցնող», ուրիշին ոչինչ չպարտադրող։ Մինչդեռ, ինչպէս ձիապան Մեսրոպն է խորհում, «Ձպէտք է այդպէս լինէր։ Մի բան սխալ էր»։

Բայց այս ամէնը առաւելապէս զգացմունքային—յուզական մակարդակում է, որի դրսեւորումներին ի պատասխան անբացառելի է սթափութեան ինքնայորդորը, պարտադրուած հաշտութիւնը։ «Ո՞ւմ դէմ ես կատաղում, ի՞նչ ես ուզում, էս է»,— կ'ասէր մաթեւոսեանական մի այլ հերոս։ Եւ ինքնապարտադրուող այդ հաշտութեամբ այլեւս պէտք է ընդունել մէկընդմիշտ տրուած այն մեծ ճշմարտութիւնը, թէ «ընդունակները սպանելու մէջ անընդունակ են»։

«Ձէզոք գօտի»ում մի տեսակէտ է արտայայտւում. «... քնէած ժողովուրդներն արեգակի ներքոյ զարթնում են, եւ արթուն ժողովուրդներն արեգակի ներքոյ մտնում են դարձեալ նիրհի մէջ»[22], որ անմասն չէ պատմական ճշմարտութիւնից։ Հարցապնդողը վանահայրն է, որն այս կերպ միտում ունի հիմնաւորելու Բագրատունիներին յաջորդած հայոց պետականութեան անկումը. «Պահանջուեց, եւ Բագրատունիները սպառեցին նաեւ ապագայ դարերի մեր ուժերը»։ Սակայն «Խումհար» վիպակում մէկ այլ պնդում ենք գտնում. «Անցեալի հետ կապի մէջ լինելու ցանկութիւնը բերում է պատմութեան ուսումնասիրում, իսկ պատերազմները պատմութեան դասերի իւրացման հետեւանք են։ Ես գալիս եմ իմ նախնիներից, եւ այսօրուայ իմ ընթացքը թելադրուած է իմ նախնիներից», որն էապէս հակասում է նախորդին։ Իսկ Մաթեւոսեանը, թւում է, թէ գոնէ մասամբ համամիտ է ծագումնաբանական ըմբռնումը հաստատող այդ տեսակէտին։ Վիպակի գլխաւոր հերոսը՝ Մնացականեանը, որ աւելի յաճախ նոյնանում է հեղինակի հետ, մի առիթով խոստովանում է. «Իմ անհատականութիւնը ես վերցրել եմ բոլորովին այլ մարդկանցից, մարդու բոլորովին այլ տեսակից, որ եթէ չէր աշխատել՝ հացից ամաչում էր, թէ իր մտածածը չէր ասում՝ ասում էր «ասում են, ասուել է», եթէ գործից, ընկերութիւնից, թշնամութիւնից անտղամարդ էր եղել՝ իրեն արժանի չէր համարում կնոջ ծոցը մտնել»[23]։

Բայց եթէ իրապէս գործում է ծագումնաբանութեան ու ժառանգականութեան այդ սկզբունքը, ապա ո՞ւր մնացին «Մեծամօրի պողպատէ սրով» զինուած «թուխ ու ջղային մարդկանց» մարտական աւանդոյթները, ի՞նչ եղաւ թաթի տակ երկրագունդը պահող «Բագրատունեաց վագրը»։ «Հայերն ուրիշ տեղ եթէ էղքան ուժեղ թագաւոր են դառնում, Հայաստանում ինչո՞ւ մի ուժեղ թագաւոր չի եղել» եւ էլի անպատասխան արձագանգող մեծ ու փոքր ուրիշ հարցեր՝ պատճառահետեւանքային

կապերի չտրուող, պատմագիտական ամենատարողունակ ըմբռնումներով մինչեւ վերջ չբացատրուող։ Ու թերեւս մնում է համաձայնել, որ իրօք «Պարտուել ենք, ուզում ենք հասկանալ թէ ինչու ենք պարտուել ու ասում ենք անհամաձայն էինք, ծերացել էինք եւայլն»[24]։

Ի դէպ, ազգային անհամաձայնութեան ու անմիաբանութեան խնդիրը տարբեր առիթներով արծարծուում է Մաթեւոսեանի ստեղծագործութիւններում։ Աւելին, նա խնդիրը դուրս է բերում իր աւանդական ըմբռնումի շրջանակից, քննում նաեւ մեր նորագոյն պատմութեան հետ կապուած։ «Թուրքիան ո՞ւմ է հատուցելու վնասը՝ Դաշնակցականների՞ն, Ռամկավարների՞ն, Հնչակեանների՞ն, Ընդհանուր Բարեգործականի՞ն, Էջմիածնի կաթողիկոսարանի՞ն, Անթիլիասի՞ կաթողիկոսարանին, Համայնավարների՞ն, թէ՞ Միաւորուած Ազգերի Կազմակերպութեանը»[25]։ «Մեծամօր» էսսէում բանավիճային անթաքոյց կրքով նկատում է գրողը։ Ազգային կուսակցութիւնների գոյութիւնը, անշուշտ, անմիասնութեան նշան չէ, եւ այս դէպքում Մաթեւոսեանն ակնյայտօրէն տուրք է տալիս ժամանակի գաղափարախօսութեամբ արմատաւորուած մտայնութիւններին։ Սակայն դրանից չեն արժեզրկւում ազգային ուժերը համախմբելու շուրջ նրա բարձր մտահոգութիւնները, որ նաեւ այլաբանօրէն ձեւակերպել է ինչպէս «Խումհար» այնպէս էլ «Մեսրոպ» վիպակներում։ Վերջինիս գլխաւոր հերոսը ժողովրդական պարզ իմաստնութեամբ վկայում է։ «Վաթսուն տարի ապրել եմ ու թէ մի բան եմ հասկացել՝ որսի օրը։ Արջն ինչո՞ւ է ուժեղ, որովհետեւ արջը ծմակ է, ծմակի մի մասն է։ Իր մի մասով ծմակը արջ է, դէ հիմա գնա գտիր, թէ որտեղ է ծմակը վերջանում ու սկսւում արջը»[26]։

Արձակագրի փնտռած միաբանութիւնն ու միասնութիւնը Ֆիզիքական պարզ համախմբում չեն, այլ բարոյական, գիտակցական ներդաշնակութիւն։ Այդ ըմբռնումով իրաւամբ քննադատւում է մեր պատմութեան ամենաճակատագրական պահերին իսկ ուղեկից հատուածական մտայնութիւնը եւ արդարացիօրէն կարեւորւում յիշողութիւնը «ժողովրդին ժողովուրդ է դարձնում ժողովրդային իր յիշողութիւնը»։ Իսկ վերջինս ընդամէնը արմատ—ակունքների գիտակցում կամ ազգային ցաւի վերապրում չէ։ Աւելին, պասսիվ հայեցողական հոգեկցութիւն չէ։ Մաթեւոսեանի ճշմարիտ համոզմամբ ազգային յիշողութիւնն առաջին հերթին գործ է, ներդրում։ «Բայց դէ մարդ ես,— միայն իրեն յատուկ պարզութեամբ բացատրում հիմնաւորում է «Զէգոք գօտի»ի ճարտարապետը, որ տարիներ շարունակ զբաղուած է Անիի աւերակների ուսումնասիրութեամբ,— ուզում ես իմաստ գտնես քո գործի մէջ ու իմ մէջ ահա հնարուել է, թէ վաղը, երբ այս ժողովուրդը ամբողջ ու հարուստ կը լինի եւ դարձեալ, ութհարիւր տարի յետոյ, հնարաւորութիւն կ՚ունենայ քարին

քար դնելու, իսկ այս աւերակները արդէն չեն լինի, որովհետեւ արդէն շատ են ծեր, այդ ժամանակ ահա իմ թղթերի մէջ գուցէ մի խորհուրդ, մի գեղեցիկ նախշ, կամարների մի շարք, պէտքական որեւէ բան գտնեն։ Իսկ եթէ չեն գտնի՝ չեն գտնի, մի կեանք էլ թող անցած լինի անտեղի»[27]։ Ասենք, որ սա նաեւ Մաթեւոսեան–գրողի եւ քաղաքացու անհատական համոզմունքն ու դաւանանքն է, որոնցով, բնականաբար, հերքւում է պատմութեան «սպիտակ էջերի» կամ բացառելի իրողութիւնների մասին իւրաքանչիւր պնդում։ Հետեւաբար չի ընդունւում «երէկ կառուցել են երէկուայ համար, վաղը կառուցելու են վաղուայ համար» իբր թէ իրապաշտական յստակատեսութիւնը։ Որովհետեւ «երէկն» անհրաժեշտ է առնուազն այսօրուայ համար. յիշողութեան իր կոթողներին «ժողովուրդը նայում ասում է՝ էս ե՛ս եմ, ես հա՛յ եմ»։ Մաթեւոսեանական պատգամախօսի՝ «Ծառերը» վիպակի հերոսի՝ Աղունի բառերով ասած. «Մարդ ու անասուն իրարից ջոկւում են յիշողութեամբ։ Յիշողութիւնը դրած է անասունի եւ մարդու արանքում։ Յիշողութեան մէջ ես՝ ուրեմն վառւում ես, մարդ ես, հաշիւներ ունես, անհանգիստ ես — յիշողութեան մէջ չես՝ հրէ՛ն բաց դաշտում կովն արածում է առանց յիշողութիւնների, իսկ հորթին երէկ են մորթել»[28]։

Նման ըմբռնումների հանգոյցում ու նկատառմամբ զգալիօրէն ընդլայնւում է՝ «Լաւը, բայց, այս աշխարհում, այնուամենայնիւ, շատանո՞ւմ է թէ՞ քչանում» փիլիսոփայական հարցի տարողութիւնը։ Բազմաչարչար, բայց անսպառ այդ հարցի պատասխանի որոնումներում էլ արարուել ու արարւում է իսկապէս մեծ գրականութիւնը։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Կոստան Զարեան, ***Նաւը լերան վրայ***, Երեւան, 1963։
2. Հրանտ Մաթեւոսեան, «Լեզուի բանաստեղծութիւնը» ***Վոպրոսի լիտերատուրի***, Մոսկուա, 1980, No 12, էջ 220–221 (ռուսերէն)։
3. ***Նոյն***, էջ 205։
4. Հրանտ Մաթեւոսեան, «Ինքնանկարի փորձ», ***Վիպակներ*** գրքի առաջաբանը, Երեւան, 1990, էջ 12։
5. Տես՝ ***Վիպակներ***։
6. Տես՝ Հրանտ Մաթեւոսեան, ***Ծառերը***, Երեւան, 1978։
7. Նոյն։
8. Հրանտ Մաթեւոսեան, ***Տէրը***, Երեւան, 1983, էջ 115։
9. Մաթեւոսեան, ***Վիպակներ***, էջ 269։
10. Մուշեղ Գալշոյեան, ***Մարութա սարի ամպերը***, Երեւան, 1981։
11. ***Գալշոյեան***, էջ 244։
12. Մաթեւոսեան, ***Վիպակներ***, էջ 260–61։
13. ***Նոյն***, էջ 193–94։
14. ***Նոյն***, էջ 346։

15. Նույն տեղում:
16. ***Նույն***, էջ 282:
17. ***Ազատամարտ***, թիւ 13, Ապրիլ 2–8, 1993, էջ 9:
18. Մաթեոսեան, ***Վիպակներ***, էջ 194:
19. ***Նույն***, էջ 286:
20. ***Նույն***, էջ 261:
21. Մաթեոսեան, ***Տէրը***, էջ 37:
22. ***Նույն***, էջ 39–40:
23. Մաթեոսեան, ***Վիպակներ***, էջ 370:
24. Մաթեոսեան, ***Տէրը***, էջ 61:
25. Մաթեոսեան, ***Վիպակներ***, էջ 287:
26. ***Նույն***, էջ 223:
27. Մաթեոսեան, ***Տէրը***, էջ 115:
28. ***Նույն***, էջ 458:

THE PERCEPTION OF NATIONAL HISTORY IN THE WORLDS OF HRANT MATEVOSSIAN
(Summary)

SARGIS PANOSIAN

In one of his interviews, the contemporary Armenian author, Hrant Matevossian, acknowledges that "... there are periods and facts in the history of human kind, that literature should not address, like the bloody genocide of 1915... It seems that the agony [of the genocide] fades out, disappears when addressed in literature."

However, even after expressing his reservation in addressing issues of "huge, remote history", which are beyond his memory and personal experience, Matevossian has attempted to interpret national history. Particularly, Matevossian tries to tackle the issue of the Armenian Genocide using an intellectual-philosophical approach. He analyses the tragedy through a paradigm which is composed of reasoning and cause and effect, and also through uncovering of the historical rhythm.

"What was necessary to do in order to avoid the Genocide" is the axis around which Matevossian weaves his network of questions and concerns. Why would the genocide take place in 1915, and not, for example, at another point in time? Why is it that even our victories have served the enemy.

Matevossian does not seem to have a decisive answer for these questions. Nevertheless he hints that national statehood is what he sees as the guarantor of the nation's harmonious existence.